63. ՃԱԿԱՏԻ ԳԻՐ

Տարերու մեկ (մի տարի) խայ հալիվորներ կնստին ուրանց սաքըվներ, ու ճակատի գրի առարկեն կէնին, կըսին. «Հովանեսի տղի ճակատագիրը էսպես էր գրվե, օր գնաց ընկավ ջուր, խեղդվավ»։

Էն մեկել կվերցու թե.— Դրուստ ա ճակատի գիր, Ղազարի տղեն էլ ընկավ թունդիր էրեցավ։

Բոլոր խալիվորներ կվկայեն, թե ճակատի գիր դրուստ ա։

Մե խումբ տղա կէղի սար, էտեսնե մեկ կճամփին գեղ ուրանց խացի։ Տղեն ա գիգա, ճամփուն մեկ քուրդ գիգա կխասի։

— Քելա, գյավուր,— կասա քուրդ,— դուն ջանֆիդան ես, պետք ա քըզի սպանեմ։

Տղեն ա կխնդրա ու կազաչա, կասա.— Ես ջանֆիդան չեմ, ես խեղճ ըրնչպար եմ, իմ էրեխեք տուն սոված, անոթի կմեռնին, ես պետք ա էրթամ իմ ճժերուն խաց առիմ, ընձի մըսպանե, ես խեղճ եմ։

— Քելա, գյավուր,— կասա,— քելա, ես քե պտի սպանեմ,— կզարկա ու էդ մարթ կիտա ուր հ'առեճ։

Գիգան, ջատ քիչ աստված գինա, գիգան մե ջրի (դարի) գլոխ։ Կտեսնին էդտեխ օձն ու լակլակ կկռվին։ Լակլակը զօձ կհախթա, ու կիտա հ'առեճ կկտցի։

Քուրդն ա կասա.— Գյավուր, կտեսիս էն լակլակ ինչպես կէնի օձու գլոխ, ես լէ քըզի էդպես պտի էնիմ։

Օձն ա կհաշվա կփիտնա ու գլոխ կմտու խողի պատրուն (ծակ)։ Լակլակն ա ազատ կէղի, թե օձ փիտցավ, գիջի օր զօձն ուտա։ Հանկարծ օձ ուր պոչ կթալա ու լակլակի վիզ կգրկա։ Լակլակն ընտեխ կթխթպա ու վեր գընկնի ու կսատկի։ Օձ կազատվի ու կքաշվի կէրթա ուրան բուն։

Հայն ա ուր մտքի մեջ կմտածա ու կասա. «Չուր մարթու մահվան վերջը մարդ պտի աշխատի օր ուր կյանք ազատա». Էդտեխ ուժ կառի օձուց։

Քուրդ էն դեեն կզարկա.— Գյավուր, դե քելա, իջինք էս ձորու մեջ օր քըզի ըսպանիմ։

Բաց, քրդու վրա կա սիվտակ բուռ (երախակալ) խանչալ մի։ Տղեն ա, գընկի քրդու հ՝առեճ կքելա, մե քիչ տեղ կկզի ուր չարխի թել մախսուղ (դիտմամբ) կապելու, ու աչից տկով կիշկա քրդու խանչալ։ Քուրդն ա կմոտենա, գյոլընկա (կհրե)՝ «Գյավուր քելա». տղեն էլ շիտկելու խետ՝ կքաշա քրդու խանչալ ու կզարկա քրդուն։ Քուրդ էնտեխ թութունի պես կփրթա ու կթալա ձորու մեջ ու կըսա. «Ճակատի գիր սուտ ա, չուր մահվան՝ մարդ պտի աշխատի օր ուր կյանք ազատա»։ Կթողա գիգա գեղ։

Գիգա գեղ, կտեսի օր իրիկվան օր էլի խայ խալիվորներ կնստին սաքվըներ, ճակատագրի առարկեն կէնին։

Տղեն կվերցու կասա.— Ճակատի գիր սուտ ա։

Ջտղեն էդտեխ կքարկոծեն թե՝ «Դու կասես ճակատի գիր սո՞ւտ ա»։

Կասա.— Ախպրտիք, ընչի՞ եք ընձի քարկոծում ավասի (ահավասիկ) մե փորձանք օր էսօր իմ գլխուն էկավ, օր ես լէ կասի թե ճակատագիր օղորթ ա, օր իմ ճակատագիրն ա գրվե, օր ես էս քրդու ձեռքով պտի ըսպանվիմ, բաց էկանք տեսանք օր օձն ու լակլակ կկռվին, լակլակ օձ էրեց կիսասպանել, ու վերջ վերջով օձ ուր գլոխ մտուց խողի պատրուն, ու պոչ թալեց լակլըկու վիզ գրկեց։ Լակլակ դեն թխթփաց ու դես թխթփաց ու փիթցավ։ Ես էլ քրդու մոտից խանչալ փախցուցի, ու զարկի զքուրդ ըսպանի։ Ես կհավատամ օր ճակատագիր սուտ ա, չուր մահվան մարդ մի պտի աշխատի ուր կյանք պաշտպանե։ Եթե չհավատաք, գնանք քրդու ջանդակ գեղի վերև, ձորու մեջն ա։

Ու խայեր գելին էրկու մարթ կճամփին կտեսին օր տղի խոսք դրուստ ա։ Գիգան ու գեղացոց կպատմին, թե տղի ըսուկ դրուստ ա։ Ամեն մարդ էլ կհավատան օր չուր մահվան մարդ մի պտի աշխատի ուր կյանք ազատա։